

զեղբարսն իւր զՄկրտիչն. ըզտէր Ազարիայն, զԱնդրէասն եւ զԱնանիայն, եւ զքորքն իւր՝ զԳօհարն, ըզՍանդուխտն, եւ զԳօզայն եւ զամ. արեան մերձաւորսն : Վս. զի այս նեղ եւ զժուար ժամանակիս, որ կարի պահասեալ եւ չքաւորեալ էր երկիրս ամ. ընչից եւ արծաթոյ համայն. եւ սա այս կասեալ ժմկիս. սրտապնդեալ. եւ ոչինչ եւ իրբեւ զազր անպիտան համարեաց զփառս՝ զփափկասիրուիս, զինչ եւ արծաթսիրութիս : Ըստ որում ասէ. զարծաթ ձեր ժանկահար եւ ժանկ լիցի ձեզ ի վկայութի : Եւ զայս ասութեա. առեալ ունէր ի մտի միշտ զտիւ եւ զբիշեր. այրէր տոչորէր հեծեծանօք փրղճըկեալ եւ հառաչմամբ աղաչէր ի դէմս Այ. վս. զի զխիղճ մտին ստիպէր եւ իզձ սրտին ցանկայր բարի խոկումն եւ այսու բանիւս աղաչէր եւ ասէր. տր. դու բաց զդուռն ողորմութե. ի վր. իմ. զի կարօղ լինիցիմ կալ ի տուն գանձուց քո : Վս. զի ոչ ունէր զաւակ մարմնաւոր՝ եթէ այնու զովանայր. այլ զհոգեւորս առնել կամէր զաւակ, որում ասէ. երանի որ ունիցի զաւակ ի սիրովն : Այսու բանիւս խոկայր եւ մտածէր՝ թէ զի՞նչ արարից, որ գանձել կարենամ յերկինս, զի ոչ ունէր ինչս բզմս.՝ եթէ ի յաւելորդաց մթերից զոր ինչ կամի առնէր, եւ ոչ զխիղճ մշտացն թուլացուցանել տայր, այլ զօրութիւն. Այ. ի բաց ընկեցեալ յինքենէ զսնտի կասկածանս, բարի համարեցաւ գանձել յերկինս, քան թէ ժանկոյ բաժին տալ՝ ասելով, զոր ինչ ունիմ ինչս եւ ստացուածս, առաքեմ ի գանձատունն Այ., եւ աստ կարօղ է տրն. ամենից կերակրել զմեզ. զայսու միայն ունէր բաւական, եւ ոչ աւելի. եւ ինքն միայն ետ գրել, ծաղկել եւ կազմել զյայտմաւորքս զայս ի հալալ եւ ի քաղցր վաստակոցն, եւ ի քրտանց երեսացն, որ ի հողագործութե. էր վաստակեալ ինքնին ձեռքն եւ ողամբ եւ թիկամբն, եւ աւարտեալ յօրինեաց եւ ետ ի սր. եւ ի հոչակաւոր վանքն ածամուխ. Գեղարդայ, եւ ի ձեռն Դաւիթ սրբանուէր վրդպտի : Վս. զի էր Դեթ. վրդպտս. առաջնորդ եւ վերատեսուչ սր. ուխտիս, որ եւ պայծառ եւ փառաւորեալ պահէր զսր. մենաստանն, զեկեղեցիս լի ամենայն գահօք եւ պաշտօնատարօք, եւ բզմ. քննյիւք. եւ միաբանօք, կրօնաւորօք եւ աղքատօք, սաղմոսերգութե., եւ հաստատ ժամատեղօք, աղօթասէր ծերօք եւ ուսումնասէր//

560ա. մանկամբ, որ եւ շարաթ եւ ի կիրակի միշտ անդադար պատարագ Այ. մատուցանելով, որ ոչ օր մի շարաթ կամ կիրակի խափանել կարէին ի տարին բոլոր :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զբարեմիտ քննյն. Երեմիա, եւ նախ զհոգեւոր ծնօղն եւ զուսուցիչն իւր զտէր Զաքարիայն, որ բզմ. աշխատանս կրեց. ի վր. իմ. զի ես մանուկ գոլով, որբ մնացի ի հօրէ, եւ այս տէր Զաքարիայս եղեւ ինձ հայր, տարաւ զիս ի սր. վանքն Գեղարդի, եւ անտի եմ սնեալ եւ ուսել. ի տէր Զաքարիայէն, որ եւ տրն. Քս. վարձատրեսցէ զնա անվաղձան փոքն. ամէն :

Դարձեալ յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն., եւ զկողակիցն իւր զՊանաղէն եւ զհայրն իւր Զաքարիայն եւ զմայրն իւր զՇաղոսկին, եւ զեղբայրքն իւր զՄկրտիչն,

զտէր Ազարիայն, զԱնդրէասն, եւ զԱնանիայն, եւ զքորքն իւր զԳօհարն, զՍանդուխտն եւ զԳօզայն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զմեծ պապն իւր զտէր Զաքարիայն եւ զկողակիցն զՄարիամն, եւ զորդին Անդրէասն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զփոքր պապն իւր զԱնդրիասն եւ զորդիքն իւր զՅովանէսն եւ զՊորամջանն, եւ Զաքարէն եւ զդուստրն ըզՄարիամն՝ զԳօհարն, եւ զՀոռոմոսիմէն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն, եւ զկողակիցն զՊանաղէն եւ զհօրեղբայրն իւր զՅովանէսն եւ զորդիքն իւր Օլբարէկն եւ զՆազարն, եւ զհանդուցեալ որդիքն զՅովանիսերն (Տ!), եւ զըլստերքն զԹամարն եւ զՊաթունն : Եւ զկողակից Օլբարէկուն Նուրիստին եւ զԱսլումն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զհօրեղբայրն զՊորամջանն եւ զկողակիցն զԲէկիթաթունն եւ զորդին իւր զՆսային եւ զհանդուցեալ որդիքն զՅակոբն եւ զԱնանիայն եւ զդուստրն զՀուսիսիմէն եւ զհանդուցեալ դստերքն իւր զԱննէն եւ զՆազուխանն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն., եւ զեղբայրն իւր զՄկրտիչն եւ զկողակիցն զՆաներն եւ զՍառախաթունն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զհօրբարսն իւր զԱնդրէասն, որ ի տիս տղայութե. հանգեաւ ի Քս. եւ զտէր Ազարիայն, որ նա եւս հանդուցեալ է առ Ած., եւ զԱնանիէն եւ զկողակիցն զՍօլթանդատէն, որ եւ նք. հանդուցեալք են ի Քս. Յս. :

... (բաց կէս սիւնակ) ...

560բ. Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զքոյրն իւր զԳօհարն եւ զկողակիցն զՄուրատն եւ զորդիքն իւր զԿարապտն. եւ զՍահակն եւ զդստերսն իւր զԱնթառանն եւ զՄարիամն եւ զմիւս քորքն զՍանդուխտն եւ զԳօզայն, որ ի տիս մանկութե. առ Ած. են փոխեցեալ :

Դրձլ. յիշեցէք ի տր. զԵրեմիա քննյն. եւ զհօրեղբորորդին իւր զՆսային. եւ զկողակիցն զՄարիամն եւ զնորաբողոք զորդին իւր զՊորամջանն, որ առ Ած. է փոխեալ. եւ զդստերսն իւր զԱննէն.

Դրձլ. յիշեցէք ի Քս. տր. զԵրեմիա քննյն. եւ զհօրեղբայրն իւր զՅովանէսն եւ զդուստր նորին զՆիսաբէթն եւ զորդիսն Նիսաբէթին զՅոհանն որ առ Ած. է փոխեալ. եւ զմիւս որդիսն զՄաթէոսն եւ զՄարկոսն եւ զդստերսն զԱննէն եւ զՍիկին :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զպապն զԱնդրէասն եւ զդուստր նորին զՄարիամն եւ զՄարիամորդիքն զՎիրապտուրն, զՅակոբն, զԳրիգորն, եւ զՍօլմոնն եւ զդստերսն Նիսաբէթն՝ զԱղիզն եւ զՓիանդէն : Եւ զմիւս դուստրն Անդրիասին զԳօհարն եւ զորդին զԳրիգորն : Այլ եւ զմիւս դուստրն զՀուսիսիմէն, եւ զորդիսն զԱւետիսն եւ զԲարաղամն, եւ զդստերսն Հուսիսիմէին զՊանդատէն եւ զՍառախաթունն :

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քննյն. եւ զքեռիսն՝ զԹադէոսն եւ զկողակիցն զՀեղինէն, եւ զորդիսն զԵրե-